ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

#1| Սեպտեմբեր 2017թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Հարգելի գործընկերներ,

Ուրախ եմ ողջունել Ձեզ Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի պաշտոնական էլեկտրոնային լրատվական ամենամսյա պարբերականի առաջին համարում:

Սույն էլեկտրոնային լրատվական պարբերականը նպատակ ունի ներկայացնելու վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության ոլորտի նորությունները, զարգացումները, նորամուծությունները:

Հուսով ենք, որ սույն պարբերականը հետաքրքրություն կառաջացնի, ինչպես ոլորտի մասնագետների այնպես էլ հասարակության լայն շերտերի մոտ:

Հարգանքով՝

Արմեն Մելկիկյան

Իտալիայի Ֆլորենցիա քաղաքում մեկնարկեց Երկրաջերմային էներգետիկայի խթանման վերաբերյալ համաժողովը

Սեպտեմբերի 11-12-ը Իտալիայի Ֆլորենցիա քաղաքում մեկնարկեց Երկրաջերմային էներգետիկայի խթանման վերաբերյալ համաժողովը, որը կազմակերպվել է Միջազգային վերականգնվող էներգիայի գործակալության (ՄՎԷԳ-ի) կողմից: Համաժողովին մասնակցում են ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Հայկ Հարությունյանը և Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողու թյան հիմնադրամի տնօրեն Արմեն Մելկիկյանը:

Համաժողովի հիմնական նպատակն է քննարկել այն անհրաժեշտ գործողությունները, որոնք կապահովեն երկրաջերմային էներգիայի կայուն զարգացումը:

Հավաժողովի ընթացքում քննարկվեցին մի շարք հարցեր Երկրաջերմային էներգիայի կայուն զարգացման վերաբերյալ, որտեղ օրակարգային Նախարարական կլոր սեղանի ժամանակ ներկայացվեց Հայաստանի Էներգետիկ ոլորտը, մասնավորապես «Երկրաջերմային հետախուզական հորատման ներդրումային ծրագիրը», որը իրականացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ և ֆինանսավորմամբ: Համաժողովի ավարտին ստորագրվեց «Աշխատել միասին նպաստելով Երկրաջերմային էներգետիկայի կայուն ապագայի կերտման համար» խորագրով հուշագիրը:

Այցելություն ՀՀ Սյունիքի մարզի Քարքարի երկրաջերմային տեղանք

ՀՀ Սյունիքի մարզի Քարքարի «Երկրաջերմային հետախուզական հորատման ծրագրի» շրջանակներում Ամերիկայի Միացյալ Նահանգներից Հայաստան էր ժամանել “RAM Energy Incorporation” ընկերության նախագահ Հեզի Ռամը: Այցի շրջանակներում հանդիպում է կայացել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Հայկ Հարությունյանի և Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության (ՀՎԷԷ) հիմնադրամի տնօրեն Արմեն Մելկիկյանի հետ: Հանդիպման ընթացքում հայկական կողմը ներկայացրեց Հայաստանում «Երկրաջերմային հետախուզական հորատման ծրագիրը» և կատարված աշխատանքները, քննարկվեցին համագործակցության հնարավորություններն ու Հայաստանում ներդրումներ կատարելու հեռանկարները:

ՀՎԷԷ հիմնադրամի աշխատակիցների ուղեկցությամբ Հեզի Ռամը այցելել է նաև ՀՀ Սյունիքի մարզ՝ Քարքարի երկրաջերմային տեղանք, որտեղ ընկերության մասնագետների հետ իրականացրել է B1 և B2 հորատանցքերի ուսումնասիրություն և Ջերմաղբյուրի տեղանքի ջրի ջերմաստիճանի չափում:

Մեկնարկում է Հայաստանում չգազաֆիկացված համայնքների էներգաարդյունավետության բարձրացման ծրագիրը

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի տնօրեն Արմեն Մելկիկյանը, «Ագբա Լիզինգ» ՎԿ ՓԲԸ-ն տնօրեն Արսեն Բազիկյանը և «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի տնօրեն Լուիզա Իգրարյանը ստորագրեցին պայմանագիր Հայաստանում չգազաֆիկացված համայնքների էներգաարդյունավետության բարձրացման ծրագրի վերաբերյալ, որի նպատակն է Հայաստանի շուրջ 280 համայնքներում ֆինանսական կազմակերպությունների միջոցով բարձրացնել էներգաարդյունավետության մակարդակը և ֆինանսավորել ներդրումները մաքուր էներգիայի զարգացման ոլորտում:

Հայաստանում գազաֆիկացված չեն շուրջ 37 հազար տնային տնտեսություններ, որոնք ներառված չեն գազաֆիկացման ծրագրերում տնտեսապես ոչ շահավետ լինելու պատճառով: Այդպիսի համայնքներում բնակչության կենցաղային պայմանները բարելավելու նպատակով ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի որոշմամբ ստեղծվեց ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարար Աշոտ Մանուկյանի գլխավորությամբ աշխատանքային խումբ, որի կազմում ընդգրկված են տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը: Չգազաֆիկացված համայնքների համար մշակվել է խնդրի լուծմանն ուղղված թիրախավորված միջոցառումներ, որի հիման վրա էլ կյանքի կկոչվի ստորագրված պայմանագիրը:

Մեկնարկեց համայնքային էներգախնայողության առաջին ծրագիրը

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի հետ համատեղ իրականացնում է Հայաստանի Հանրապետության համայնքների էներգախնայողության ծրագիր, որի նպատակն է Հայաստանի համայնքներում բարձրացնել էներգաարդյունավետության մակարդակը և ֆինանսավորել ներդրումները մաքուր էներգիայի զարգացման ոլորտում: Առաջին համայնքային էներգախնայողության ծրագիրն իրականացվում է ՀՀ Կոտայքի մարզի Քասախ գյուղում, որի շրջանակներում իրականացվում է հետևյալ էներգախնայողության միջոցառումները՝ արևային ֆոտոէլեկտրական համակարգերի տեղադրում, արևային ջրատաքացուցիչ համակարգերի տեղադրում շուրջ 70 տնային տնտեսությունների տանիքներում, ինչպես նաև համայնքի արտաքին լուսավորության ոչ էներգաարդյունավետ լուսատուների փոխարինում լուսադիոդային լուսատուներով: Համայնքներում Էներգախնայողության ծրագրի նպատակն է նվազեցնել ոչ արդյունավետ էներգասպառումը և ընդլայնել մաքուր, արդյունավետ, ապահով և մատչելի էներգետիկ տեխնոլոգիաների օգտագործումը: Կատարված աշխատանքները կնպաստեն բնակիչների ամսական էլեկտրաէներգիայի և ջրատաքացման համար ծախսվող էներգիայի և դրանց դիմաց վճարվող գումարի կրճատմանը, հետագայում նաև զրոյացմանը: Վերոնշյալ աշխատանքների արդյունքում CO^2 արտանետումների կրճատումը կկազմի տարեկան 94 տոննա:

Իրականացված էներգախնայուղության ծրագրի արդյունքներ

Երևանի Հ. Թումանյանի անվան տիկնիկային թատրոն

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը էներգախնայողության ծրագրի շրջանակներում Երևանի Հ. Թումանյանի անվան տիկնիկային թատրոնում իրականացրել է էներգախնայողության միջոցառումներ, որի նպատակն է կրճատել էլեկտրաէներգիայի սպառումը:

Կատարված էներգախնայողության միջոցառումների շնորհիվ թատրոնում էլեկտրաէներգիայի ծախսերի խնայողությունը կազմում է շուրջ 78%:

Լուսավորության համակարգի արդիականացումը ավելի է գեղեցկացնում թատրոնն ու բեմական և ստեղծագործական լայն հնարավորություններ ընձեռում թատրոնի ողջ անձնակազմին:

Գերմանահայկական հիմնադրամը, KfW բանկի և Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի հետ համատեղ իրականացնում է ‹‹Աջակցություն Էներգախնայողության ֆինանսավորմանը ՓՄՁ-ների ոլորտում›› ծրագիրը

Գերմանահայկական հիմնադրամը, KfW բանկի և Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի հետ համատեղ իրականացնում է ‹‹Աջակցություն Էներգախնայողության ֆինանսավորմանը ՓՄՁ-ների ոլորտում›› ծրագիրը:

Համաձայն International Projekt Consult GmbH և Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի միջև կնքված պայմանագրի՝ 2016թ. օգոստոսից մինչ 2017թ. սեպտեմբերի 30-ը հիմնադրամի փորձագետների կողմից իրականացվել է 144 էներգետիկ ուսումնասիրություն:

Ծրագրի շրջանակներում կատարվել են հետևյալ ուսումնասիրությունները՝

144 էներգետիկ ուսումնասիրություն, որոնցից՝

- 130-ը պարզեցված էներգետիկ ուսումնասիրություն՝ ներդրման գումարը ոչ ավել 80 մլն ՀՀ դրամից
- 10 էներգետիկ ուսումնասիրություն (ներդրման գումարը 80 մլն ՀՀ դրամից ավել)
- 2 նախնական էներգետիկ գնահատում

Պարզեցված էներգետիկ ուսումնասիրություններից 2-ը ստացել են բացասական եզրակացություն:

Ծրագրի 2016թ. օգոստոսից 2017թ. սեպտեմբերի 30-ը ժամանակահատվածի հիմնական ցուցանիշները

Դրական եզրակացությամբ հայտերի քանակը՝

140 հայտ

Ներկայացված վարկի գումարը՝

4,768 մլն. դրամ

ԷԽՄ-ներին ուղված ներդրումը՝

4,773 մլն. դրամ

Ակնկալվող էներգախնայողությունը՝

363,631,672 կՎտԺ

Էներգաարդյունավետությունը՝

37 %

CO_2 արտանետումների կրճատում՝

125,606 տոննա

Ծրագիրը շարունակվում է: